ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ

ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ

2013-2025

«Հանրային լրագրության ակումբ» ՀԿ

ՀԼԱ PJC
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
PUBLIC JOURNALISM CLUB

ՄԵՐ ՄԱՍԻՆ

2013 թվականից Մեդիա կենտրոնը հանդես է գալիս որպես բազմակողմանի քննարկումների և բանավեճերի հարթակ՝ քաղաքացիական հասարակության ձայնը բարձրացնելու և կարևոր հարցերը հանրության ուշադրությանը ներկայացնելու նպատակով:

Ամենշաբաթյա քննարկում-բանավեճերը, հարցազրույցներն ու մամուլի ասուլիսները անդրադառնում են Հայաստանում և տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին, բարեփոխումներին, հրատապ խնդիրներին ու հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաներին:

ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Մեդիա կենտրոնի առաքելությունն է խթանել քաղաքացիական հասարակության դերակատարումը՝ ձևավորելով բանավեճի և ժողովրդավարական գործընթացներում ակտիվ ներգրավվածության մշակույթ՝ արդիական քաղաքական, սոցիալական և հասարակական խնդիրների շուրջ:

Մենք նպաստում ենք քաղաքացիական հասարակության, մեդիայի և որոշում կայացնողների միջև բաց ու տեղեկացված քննարկումներին, հանրային իրազեկվածության բարձրացման և ժողովրդավարական բարեփոխումների խթանման նպատակով:

Մարդու իրավունքների խախտումների և ժողովրդավարական գործընթացների խոչընդոտների բարձրաձայնումն ու դրանց շուրջ հանրային ու հաշվետվողականություն պահանջող քննարկումների կազմակերպումն անբաժանելի մասն են մեր առաքելության:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մեդիա կենտրոնը հիմնադրվել է **2013** թվականին, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության և մի շարք միջազգային գործընկերների ու դոնորների ֆինանսական աջակցությամբ: Արդեն մեկ տասնամյակից ավելի է՝ այն գործուն հարթակ է, որտեղ հյուրընկալվում են տարբեր տեսակետներ կրող անձինք, որտեղ բախվում են կարծիքներ, անցկացվում քննարկումներ, հնչեցվում քաղհասարակության առաջարկություններն ու դիտարկումները, իսկ այդ ամենը լուսաբանվում է լայնորեն:

ԲԱՑԱՌԻԿՈՒԹՅՈՒՆ

Մեդիա կենտրոնը Հայաստանում միակ հարթակն է իր տեսակի մեջ, որտեղ քաղհասարակությունն անվճար հնարավորություն ունի ըստ անհրաժեշտության կազմակերպել ասուլիսներ, քննարկումներ, բարձրաձայնել մտահոգություններ, առաջարկություններ, արձագանքել բարեփոխումների ընթացքին, ընտրություններին, այլ զարգացումներին, ինչպես նաև հաշվետու լինել իր կատարած աշխատանքի վերաբերյալ՝ ներկայացնելով զեկույցներ, հետազոտություններ, դիտորդության արդյունքներ և այլն:

ՄԿ-ում անցկացվող միջոցառումները լայնորեն լուսաբանվում են հայաստանյան ԶԼՄ-ների կողմից, վերահեռարձակվում առցանց հարթակներում:

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Աջակցել քաղաքացիական հասարակությանը հանրության հետ մեդիայի միջոցով արդյունավետ հաղորդակցման հարցում՝ բազմազանեցնելով մեդիա լուսաբանումը:
- Նպաստել քննարկումների ու բանավեճերի մշակույթի ամրապնդմանը, բաց, հաշվետու և թափանցիկ կառավարմանը, քաղհասարակություն-պետություն երկխոսությանը:
- Բարձրացնել հասարակության իրազեկվածությունը կարևոր թեմաների, խնդիրների և ընթացող բարեփոխումների շուրջ՝ օգտագործելով մեդիայի ընձեռած հնարավորությունները, խթանելով ՄԿ նախաձեռնած թեմաների շուրջ մեդիա լուսաբանումը:
- Նպաստել Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանը, խթանել քաղհասարակության՝ վերահսկողություն իրականացնելու առաքելությունը:

ԹԻՐԱԽ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մարդու իրավունքներ
- Դատաիրավական ոլորտ
- Օրենսդրական փոփոխություններ
- Ոլորտային բարեփոխումների լուսաբանում
- Անվտանգություն
- Ընտրություններ
- Հաշվետու և թափանցիկ կառավարում

LIVE ԻՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ LIVE

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Բազմակողմանի քննարկումներ, որոնք մասնակցում են քաղհասարակության, փորձագիտական ու պետական գերատեսչությունների ներկայացուցիչների:

ԲԱՆԱՎԵՃԵՐ

Տաղավարային բանավեճեր, որոնց միջոցով մենք անդրադառնում ենք կարևոր խնդիրների՝ խթանելով բանավեճի մշակույթի զարգացմանը, քաղհասարակություն-պետություն երկխոսությանը:

ԱՍՈՒԼԻՍՆԵՐ

Բաց հարթակ քաղհասարակության համար՝ կատարած աշխատանքը, կամ այս կամ այն զարգացման վերաբերյալ մոտեցումներն ու առաջարկները ասուլիսի ձևաչափով ներկայացնելու համար:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Թեմատիկ հարցազրույցները հնարավորություն են տալիս քաղհասարակության անդամներին ներկայացնել իրենց մոտեցումները համապարփակ ու խորքային զրույցի ձևաչափում:

ՖԻԼՄԵՐ

Փաստավավերագրական ֆիլմերի միջոցով մենք վեր ենք հանում մարդու իրավունքների խնդիրները, բացատրում բարեփոխումները, ներկայանցում ժողովրդավարական զարգացման մարտահրավերները:



Մեդիա կենտրոնը՝ թվերով

Փետրվար 2013 -
հունիս 2025
3,237 աշխատանքային օր

2200-ից ավելի
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆԸ՝ ԹՎԵՐՈՎ

12 ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ

Մարդու իրավունքներ

Ոստիկանական բարեփոխումներ

Դատաիրավական բարեփոխումներ

ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ

2013-2025

800,107 ԱՄՆ ԴՈԼԱՐԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ

Մեդիա կենտրոնը միջազգային գործընկերների և դոնորների աջակցությամբ ավելի քան մեկ տասնամյակ հանդիսացել է բանավեճերի, քննարկումների, հարցազրույցների, մամուլի ասուլիսների, ֆիլմերի ցուցադրությունների և քաղաքացիական երկխոսության հարթակ՝ հնչեցնելով բազմազան ձայներ և նպաստելով քաղհասարակության ջատագովությանը և իրազեկելով միլիոնավոր քաղաքացիների:

ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ

- Շարունակել ապահովել բաց, հաշվետու և թափանցիկ միջավայր, որտեղ քաղհասարակությունը կարող է ներգրավվել պետության և հասարակության երկխոսությանը:
- Խթանել Հայաստանում ժողովրդավարության ամրապնդումը և նպաստել հասարակության տեղեկացվածությանը:
- Աջակցել բաց և հաշվետու կառավարմանը, որին կհետևի հանրային վստահության ավելացում և հասարակության ակտիվ մասնակցություն:

ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՋԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ ԵՂԵԼ

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

British Embassy Yerevan

Democracy Development Foundation

ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆՆ ԱՌՑԱՆՑ

- Հանրային լրագրության ակումբ
- Instagram
- YouTube
- TikTok
- Facebook
- E-mail

ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ

Շնորհակալություն աջակցության և համագործակցության համար:

ՀԼԱ PJC
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
PUBLIC JOURNALISM CLUB

(c) 2025